

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 60

28 ապրիլի, 2020 թվական

### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N°298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, հաշվի առնելով Պարետի՝ 2020 թվականի մարտի 20-ի N°Յ/17-2020 ցուցումը և 2020 թվականի մարտի 31-ի N°27 որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի ապրիլի 22-ի N 1088-Ա, N 1092-Ա, N 1132-Ա, 2020 թվականի ապրիլի 23-ի N 1143-Ա, 2020 թվականի ապրիլի 24-ի N 1165-Ա, 2020 թվականի ապրիլի 27-ի N 1195-Ա, N 1196-Ա, N 1207-Ա, N 1208-Ա, N 1209-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի ապրիլի 26-28-ը իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
  - 1) «Սիթի» ՍՊԸ, ք. Երևան, Գարեգին Նժդեհ 13.
  - 2) «Կալսի Բրազերս» ՍՊԸ, ք. Երևան, Արշակունյաց 44/1.
  - 3) «Նարեկ Խաչատրյան» Ա/Ձ, ք. Երևան Օհանովի 29/9.
  - 4) «Հայթիզնեսթանկ» ՓԲԸ, ք. Երևան, Տերյան 69.
  - 5) «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, ք. Երևան, Ամիրյան 23/1.
  - 6) «Սոս Նազարյան»Ա/Ձ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 12/1.
  - 7) «Ռոզա Կարապետյան» Ա/Ձ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի 14/1.
  - 8) «Վահագն Գրուպ» ՍՊԸ, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Սայաթ-Նովա 9/25, 26, 27.
  - 9) «Զիմ» ՍՊԸ, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 166 8.

10) «Գագիկ Ստեփանյան» ԱԶ, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 143 13-14:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Արման Սարգսյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 28/04/20 22:55:30 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ